ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 սեպտեմբերի 2023 թվականի № 280-Ա

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի՝ **որոշում եմ.**

1. Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետություն մուտք գործած անձանց Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզում կեցության վայրեր տրամադրելու *(տեղավորելու)*, կենցաղային պայմաններով *(սննդով և անհրաժեշտ այլ պարագաներով)* և երեխաների կրթության շարունակականությունը ապահովելու աշխատանքները համակարգելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ հետևյալ կազմով.

1) ***Միսրոն Սահակյան*** - աշխատանքային խմբի ղեկավար, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետ,

2) ***Մհեր Գևորգյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի խորհրդական,

3) ***Ստեփան Բաղդասարյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի մարզպետի օգնական,

4) ***Անուշ Ղահրամանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության պետ,

5) ***Կարեն Հովսեփյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ,

6) ***Հարություն Ալեքսանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ,

7) ***Արմեն Հակոբյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության գլխավոր մասնագետ,

8) ***Կարեն Հունանյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ,

9) ***Նաիրա Մարգարյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,

10) ***Թերեզա Մաթևոսյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ,

11) ***Ինգա Հայրիյան*** - աշխատանքային խմբի անդամ, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ:

2. Աշխատանքային խմբին՝ կատարված և ընթացիկ աշխատանքների արդյունքների վերաբերյալ պարբերաբար ներկայացնել տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

2023 թվականի սեպտեմբերի 25
ք. Հրազդան